Բերքատվության բարձրացման ձևերի մեջ շատ մեծ տեղ է գրավում սորտային հատիկներով ցանքը:

Սորտային հատիկը տալիս է բարձր բերք, քան վոչ սորտայինը: Սորտային հատիկի վորակը միշտ ավելի բարձր ե, քան վոչ սորտայինները: Սորտային հատիկն ավելի լավ է զիմանում յերաշտին, ավելի լավ է ձեռնում և հիվանդություններից ավելի քիչ ե խնայում:


ԽՍՀՄ Փողկոմիտորի վարողմամբ, զեռևս 1931 թ. մայիսին կազմակերպված է համամիութենական միասնական պետական տեսակաֆոնդ: Կոլտնտեսություններում վոչ սորտային հատիկի փոխանակումը կատարվում է պլանային կարգով: Սատանակա սորտային հատիկի, կոլտնտեսությունները պետք է հատուկ հոգատարությամբ վարվեն նրա հետ: Սորտը կարող է հեջտությունը փչանալ, յեթե կոլտնտեսությունը ձեռք չառնի մի շարք միջոցներ՝ սորտային հատիկի փչացման դեմ:

Իսկ ինչպես պահպանել սորտը:

Ամենից առաջ անհրաժեշտ է աշալուրջ հետևել, վորպեսզի սորտային հատիկի մեջ այլ սորտի հատիկներ ընկնեն: Սորտային հատիկը պետք է առանձին պահել վոչ սորտայինից: Բոլոր մեքենաները (տեսակավորողները, կալսիչները, շարքացան մեքենաները) աշխատանքից առաջ պետք է լավ մաքրվեն նրանց մեջ մնացած այլ սորտի հատիկներից: Ցերք ցանքը կատարվում է ճիրերով, չի կարելի նրանց կերպից լայլ սորտի հատիկով: Զմարսության հատիկը թրեքի միջոցով կարող է գաշտ ընկնել և վա-

բակել սորտը: Կոլտնտեսական դաշտերին կից յեղած մենատընտեսների բոլոր դաշտերը պետք ե ցանվեն այն սորտի սերմերով, վորով ցանված են կոլտնտեսական դաշտերը:

Այնպիսի մշակույթների սորտային ցանքերը, վորպիսին են տարեկանը, յեղիպտացորենը, սորգոն, վոչ սորտային ցանքերց մեկ կիլոմետր պետք ե հեռու լինեն: Սորտային սերմացուները պետք ե խնամքով ախտահանվեն և ունենան բարձր ագրոտեխնիկա: Սորտային հատիկը պետք ե ցանել աշնանից վարած և գարնանը լավ նախապատրաստված հողում: Տեսակավոր ցանքերին հատկացված ցեղահողամտսերը ամառվա ընթացքում 3—4 անգամ պետք ե կուլտիվացիայի յինթարկել, իսկ խթա-



Նկ. 10. Պապովի մեքենան՝ հատիկի ախտահանման հոմար

ֆաստակար մոլախոտերով վարակված լինելու դեպքում՝ 5—6 անգամ:

Ծիլերը յնրեան գալիս սորտային ցանքերը պետք ե ինսամբով քաղհաներ: Մինչև հասկակալելը քաղհանը պիտք ե մեկ անգամ ես կրկնել:

Սորտային հատիկի բերքահավաքից առաջ պետք ե աշխատել, վորպիսպի ցանքերը նայված լինեն զյուղատնտեսապրոդուտորի կողմից, վոր վկայական ե տալու տվյալ հատիկի սորտային լինելու մասին: Սորտային հատիկի համար պետությունը վճարում ե ավելի բարձր գին, քան վոչ-սորտայինի:

Սորտային հատիկը կոլտնտեսական դաշտերի հարստությունն ե.

## ՍԵՐՍԱՑՈՒՅՆԵՐԻ ՑԱՐՈՎԻԶԱՑԱՑԻԱՆ

Մեր պյուղատնտեսական գիտություն բոլոր նվաճումների մեջ առաջին տեղերից մեկն ե գրավում ակադեմիկոս Լիսենկոյի աշխատությունները:

Ակադեմիկոս Լիսենկոն իր աշխատություններով ցույց ավեց թե ինչից ե կախված բույսի զարգացումը և ինչպես կարելի յեղեկավարել այդ զարգացումը: Ակադեմիկոս Լիսենկոյի նվաճումներից մեկը լայնորեն կիրառվում ե կոլտնտեսություններում և խորհանտեսություններում: Այդ կոչվում ե յարովիզացիա:

Ցարովիզացիան սերմացուն ցանքի համար նախապատրաստելու հատուկ յեղանակ ե: Ցարովիզացիան սերմացուն տալիս ե ավելի արագ հասունացող ցանքեր, Ցարովիզացիայի ոգնությամբ կարելի յերինակ, ստիպել տշնանացան հացահատիկին բերք տալ ցանքի առաջին տարում: Այլ խոսքով՝ յարովիզացիայի միջոցով կարելի յեր աշնանացան հացաբույսերը դարձնել գարնանացան: Այստեղից ել առաջացել ե ցարովիզացիան անունը, վորնանակում ե «գարնանացում»: Սակայն կոլեկտիվ և խորհրդային տնտեսություններում տմինից ավելի յարովիզացիայի յեն յինթարկում վոչ թե աշնանացան հացահատիկի սերմերը, այլ գարնանացանի սերմերը: Հատկապես տարածված է գարնանացան ցորենի յարովիզացիան: Ցարովիզացիայի յինթարկված ցորենն արագ հասունանում ե և դրա շնորհիվ ել ազատվում ե յերաշտից, վոր սովորաբար տեղի յեր ունենաւմ հատիկի հասունացումից հետո: Վերջին հաջով յարովիզացիան ուժեղ կերպով բարձրացնում ե բերքը:

Սերմացի յարովիզացիան պահանջում ե խիստ ձգտապապահություն: Ցարովիզացիայի ժամանակ պետք ե խստորեն պահպանել յարովիզացիայի վերաբերյալ հրահանգը, վոր տպված է Տ. Դ. Լիսենկոյի և Ֆ. Ս. Ստեպանենկոյի «Գրուզացիա սելյա-հօգայիշտենիք քարոզիկում»:

Ցարովիզացիան կայանում ե հնատեյալում: Վերցնում են լավ զտված և ծլունակ սերմացու փառմ են այն վորեն սրանի կամ ավելի հարմար ե ծածկոցի հատակի վրա: Հատակին փափած սերմացուն 3. անգամ թթջում են ջրով: Հրահանգում ձգտորեն ցույց ե տրվում, թե տարբեր սերմերի և տարբեր սորտերի համար ինչքան ջուր պետք ե վերցնել:

Խոնացումից 15—20 ժամ հետո սերմերն սկսում են ծլնլ:

Յերբ սերմացվի ամենափոքր քանակն սկսում է ծկթել (հակլու-  
նուօս), շեղը 20—25 ոմ շերտով ցրում են, վորպեսզի հատիկի  
չերժառատիճանն իջնի: Հետո հատիկը մինչև ցանքը պահպում է  
և խիստ վորոշակի (յուրաքանչյուր բույսի համար առանձին)  
չերմության տոկ:

Յերբ ցանում ենք յարովիզացիայի չենթարկված սերմացուն՝  
նաև ինքն իրեն յարովիզացիայի յե յենթարկվում, բայց դա տեղի  
յե ունենում զաշտում: Առանց յարովիզացիայի վոչ մի բույս չի  
կարող զարգանալ: Բայց յարովիզացիայի համար դաշտում միշտ  
հարմար պայմաններ չեն լինում: Դրա համար յարովիզացիան  
դաշտում ձգձգվում է յերկար ժամանակ փորը և ուշացնում և  
բերքահավաքը: Առա ինչու համար սերմացվի յարովիզացումն  
արագացնում է բռուսերի հասունացումը:

Ուկրաինայի Սելեկցիայի ինստիտուտը 1933 թվին տվյալ-  
ներ և ստացել այն կոլտնտեսություններից, ուր կիրառել են յա-  
րովիզացիա: Վերջիններիս ահազին մեծամասնությունը ցույց է  
տվել, վոր յարովիզացիան բարձրացրել է բերքը:

Սյստեմ, Ուկրաինայի Ռեշետիլովսկի շրջանի «Կուլտուրա  
թվերորդա» կոլտնտեսությունում յարովիզացիայի չենթարկված  
ցորենը տվել է հեկտարից 13,5 ցենտներ, իսկ յարովիզացիայի  
չենթարկվածը՝ միայն 9 ցենտներ:

1934 թվին յարովիզացիան տվել է Էլավելի լավ արդյունք-  
ներ, և առաջին հերթին այն պատճառով, վոր կոլտնտեսություն-  
ները յուրացրել են յարովիզացիայի տեխնիկան:

## 2.

### Յ Ա Ն Գ

Մինչև ցանքի սկիզբը, բացի սերմացվի գտումից, պետք է  
կտարգին նաև մի շարք ուրիշ աշխատանքներ կոլտնտեսական-  
ները պետք ե փորձնական յերթի գուրս գան դեպի դաշտը: Այդ  
փորձնական յերթերում ստուգվում են ցանող և վարող բոլոր մե-  
քենաները, սայլերն ու լծասարքերը: Նկատվող բոլոր թերու-  
թյունները պետք ե ցանքից առաջ վերացվեն, Մինչև ցանքի  
սկիզբը կոլտնտեսություններից հեռու ընկած հողամասերում ան-  
հրաժեշտ ե կազմակերպել դաշտային կայաններ: Յեթե նախորդ  
տարիներից նման կայաններ կազմակերպված են, պետք ե նա-  
յլ, թե ինչ մասը պետք ե կարգի զցել և բարելավել:

Բոլոր ձիերը պետք ե լավ վիճակում լինեն աշխատանքի  
անցնելու համար:

ՄԻՆՉԵՎ ՑԱՆՔԻ ՍԿԻԶԲԸ ՊԵՏՔ Ե ՀՇՏՈՐԵՆ ՀԱՇՎԵԼ ՑԱՆՔԻ  
ՆՈՐՄԱՆԵՐԸ ՏԱՐԲԵՐ ՀՈՂԱՍԱՍԵՐԻ ՀԱՄԱՐ

Մենք արդեն գիտենք, վոր միութենական Հողժողկոմատը  
Միության բոլոր ըրջանների համար սահմանում ե ատրբեր մշա-  
կութների ցանքի միջին նորմաներ: Բայց քաշի, սերմացվի այն  
քանակը, վոր պետք ե ցանքի մեկ հեկտարի վրա, կոչվում ե ցան-  
քի միջին նորմա: Երջանային հողային բաժինը պետք ե մինչև

Դանքի սկիզբը յուրաքանչյուր կոլտնտեսության նախագահի հաջորդի այդ միջին նորմաները Յենթագրենք թե ձեր շրջանի համար գարնանցան ցորենի ցանքի միջին նորման մեկ հեկտարի համար ստիմանված ե 150 կգ. Այդ գեռես չի նշանակում, վոր յուրաքանչյուր հեկտարի վրա պետք ե ցանվի ուղիղ 150 կգ.

Միջին նորմաները, ինչպես արդեն գիտենք, ճշտ են միայն այն գեպքում, յերբ սերմացվի ծլունակությունը և մաքրությունը 95% տոկոսից պակաս չեն. Ուրիշ խոսքով՝ ցանքի սահմանված նորմաները կիրառելի յեն 90% կամ վոչ պակաս տնտեսական պիտանիության գեպքում (տես եջ 20):

Ցանքից քիչ առաջ յուրաքանչյուր կոլտնտեսության մեջ, յուրաքանչյուր բրիդագում սերմացվի ծլունակությունը մեկ անգամ ևս պետք ե վրոշվի (ըստ հնարավորության սերմանությունից լարուատորիաների միջոցով): Յենթագրենք նրա ծլունակությունն այժմ հավասար ե 91% ի, իսկ մաքրությունը մնացել ե նախկինը, այսինքն՝ 95%: Այդ գեպքում ինչքան պետք ե ցանել այդ սերմացվից:

Առաջ հաշվենք մեր սերմացվի տնտեսական պիտանիությունը: Դրա համար կրազմապատկենք 91%-ը (ծլունակության տոկոս) 95%-ը (մաքրության տոկոս) և ստացված թիվը կրամանենք 100%-ի:

Կատանանք ( $91 \times 95$ ):  $100 = 86,45\%$

Այդ ել կլինի մեր սերմացվի տնտեսական պիտանիությունը:

Իսկ ցանքի գերուհիշալ նորման կարելի յե ցանել, յերբ տերմերի տնտեսական պիտանիությունն ավելի բարձր ե (90,25 տոկոս ի): Սակայն մեր սերմերն այժմ ունեն ավելի ցածր տընտեսական պիտանիություն. Դրանք վորակով ավելի վատ են և ցույց տված նորմայից ավելի պիտի ցանելի:

Իսկ ցանքի անգամ ավելի շատ Այնքան անգամ, վորքան անգամ հողմուկումատի ցույց տված տնտեսական պիտանիությունը բարձր ե մեր սերմերի տնտեսական պիտանիությունից:

Այդ հաշվվը կատարում են այսպիս. ցանքի համար ցույց տված 150 կգ նորման բազմապատկում են ԽՍՀՄ Հողմուկումատի սահմանած տնտեսական պիտանիության տոկոսի վրա, այսինքն՝ 90,25% ի. Բազմապատկելով ստանում ենք  $150 \times 90,25 = 135,37,5$ : Հետո հարկավոր ե ստացայ թիվը բաժանել մեր սերմացվի տնտեսական պիտանիության վրա, այսինքն՝  $86,45\% \cdot 135,37,5 = 117,9$  կգ կլինի մեջ պատկանում է այսպիսի պատահած սերմացվի մաքրությունը:

Վրա: Բաժանելով 13538,5-ը 86,45%-ի վրա, կատանանք (13537,5: 186,45)=մոտավորապես 156 ու կես կիլոգրամ:

Այդ ել կլինի գարնանացան ցորենի մեր սերմացվի ցանքի միջին նորման մեկ հեկտարի համար Առանձին հողամասերի համար անհրաժեշտ ե մի քիչ փոփոխել նաև այդ նորման:

Յեթե հողը շատ բերրի յե (որինակ, բոլորովին նոր հերկած խոպան), այդ գեպքում պետք ե նորման իջեցնել մոտավորապես 10% ովկ: Այդ գեպքում մենք կստանանք հեկտարի համար 141 կգ նոր նորմա: Յեթե հողը շատ աղքատ ե, այդ գեպքում նորման պետք ե բարձրացնել 10% ովկ: Վատ հող ունեցող հողամասերի համար նորման կլինի մոտավորապես 172 կգ մի հեկտարին:

Ճիշտ այդպես բարձրանում ե նորման նաև մոլախոտեքով շատ վարակված հողերի և մի փոքր իջնում՝ մաքրուր հողամասերի նկատմամբ: Ցանքի ուշացման գեպքում նորման նույնպես բարձրանում ե, իսկ ցույց տրված ժամկետներում ցանելու գեպքում մնում ե անփոփոխ:

Ըստհանուր կանոնն այս ե: Ինչքան կուլտուրական բույսերի գարգացման պայմանները վատ լինեն, այնքան ել բարձր պիտի լինի ցանքի նորման: Բարձրացրած նորմայով կարծես ծածկետներում ցանելու գեպքում ենում ե անփոփոխ:

Այդ, իհարկե, չի նշանակում, թե ցանքի նորման բարձրացնելով կարելի յե վերացնել գաշտերի վարակվածությունը և նախացնքային վատ աշխատանքը: Շատ սերմեր վատ պայմաններում չեն ծուռ բոլորովին, դրա համար ել մենք ցանում ենք մի փոքր ավելի շատ:

Որինակ, վատ, չպարարտացրած հողում նորման մեծացվում ե այն պատճառով, վոր առանձին բույսերի արմատները վատ են աճում և տարածվում գեափի կողքերը. ինչպես նաև բույսերը վատ են թփակալում: Ո՞վ ե մեղագոր նորմայի մեծացման անհրաժեշտության համար իհարկե՝ մենք ինքներս:

Մոլախոտերից չմաքրված հողամասերում սերմացվի նորման պետք ե ավելացնել նրա համար, վորպեսզի խիտ աճած ցանքերը մոլախոտերին տեղ չտան, վորպեսզի ցանքերը խեղճեն մոլախոտերին:

Ցանքի ուշացման գեպքում նորման մեծ պետք ե լինի այն պատճառով, վոր ուշացման գեպքում հացարույսերն ուժեղ կիրապվ պատվամ են մոլախոտերով և վատ են թփակալում: Այսպիս, յեթե

ժամանակից ուշ և վաստավանք են կատարում, ապա տառ-  
ջին հերթին կորցնում են ավելորդ սերմացու և հետո ել ստա-  
նում են ցածր բերք: Ուրեմն՝ նշանակում են, նորմայի բարձրա-  
ցումը վոչ թե դրական, այլ բացասական փաստ է: Այդ մատնա-  
ցույց և անում սերմացվի կամ հողի վատ դրության մասին:  
Վորպեսզի մեր այդ բացերի հետևանքները նվազեցնենք, հենց  
դրա համար ել դիմում ենք ցանքի նորմայի բարձրացմանը:  
Կոլտնտեսության մեջ դասակարգային թշնամին հաճախ և ոգ-  
տագործում այդ դրությունը, վորպեսզի վնաս հասցնի տնտե-  
սությանը, Նա ագիտացիա յե անում ցանքի նորման իջեցնե-  
լու համար այն ժամանակ, յերբ այն հարկավոր և բարձրացնել,  
ձիւտ սահմանված ցանքի նորման բացասիկ նշանակու-  
թյունը ունի Դրա համար ել այդ խնդրի լուծմանը պետք և  
մոտենալ լուրջ և մտածված կերպով:

## ՀՈՂԻ ՆԱԽԱՑԱՆՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ

Վորպեսզի սերմերը լավ ծեն, հողում պետք և լինի բավա-  
րար քանակի ջուր: Բացի դրանից, սերմերի ծլելու համար ան-  
հրաժեշտ և նաև ողը վերջապես, ծլելու համար անհրաժեշտ և  
նաև ջերմություն: Որինակ, սառը ջրում ընկած սերմերն ողի և  
տաքության պակասության հետևանքով վոչ սիայն չեն ծլում:  
այլ կարող են նեխել և բոլորովին փշանար

Նախացանքային մշակումով է, վոր մենք պետք և ստեղ-  
ծենք անհրաժեշտ պայմաններ սերմերի ծլման համար: Նախ և  
առաջ ցանքից առաջ հողը պետք և փիրեցնել գոնե այնքան խո-  
րությամբ, ինչ խորությամբ ցանվելու յեն սերմերը: Յեթե ցան-  
քը կատարվի պինդ հողում, այդ գեպում շաբքացան մեքենան  
չի կարող սերմերը լավ թաղեր Բացի գրանից, փիրեցը հողը  
չի կորցնում խոնավությունը Ցանքի ժամանակ հողամասի մա-  
կերեսը պետք և հարթ լինի՝ առանց կոշտերի: Վերջապես, ցան-  
քից առաջ հողը բոլորովին մաքրված պիտի լինի մոլախոտերից:

Բոլորին հայտնի յե, վոր գարնանացան հացարույսերի հա-  
մար հերկը պետք և կատարել նախորդ աշնանը (աշնանավար):  
Հենց վոր աշնանավարը գարնանն այնքան չորանա, վոր հողը  
չկաչի, չսվաղվի, անմիջապես պետք և փոցին Աշնանավարի  
փոցին ուշացնելու յուրաքանչյուր որը խիստ կերպով կիջեց-  
նի բերքը:

Արևմտյան Սիբիրի Զալգինսկի հացահատիկային խորհրդա-  
յին տնտեսության մեջ աշնանավարը չորացավ մայիսի 5-ին  
Յերբ հողը նույն որը փոցինեցին և ցանեցին՝ 1931 թ. յերաշտա-  
յին տարում՝ մեկ հեկտարից մտացան 6 ցենտներ բերք: Մյուս  
հողամասերում ուշացը ին ժամկետը և փոցինեցին սիայն մայիսի  
16-ին: Այդ այն հետևանքն ունեցավ, վոր սերմն անդամ շնա-  
վաքեցին: հեկտարից ստացվեց 0,3 ցենտներ բերք:

Յեթե աշնանավարն ուժեղ վարակված և մոլախոտերով, կամ  
հողը խիստ ամրացել է, այդ գեպում գարնանացան հացա-  
բույսերի համար միայն փոցինելը բավական չե: Հողն այդ գեպ-  
ում անհրաժեշտ և մշակել կուլտիվատորներով, իսկ հետո՝ փոց-  
ինել: Վոչ սեանողային գոտում շատ ծանր հողերը գարնանը  
նույնիսկ կրկնահերկ են անում ու անմիջապես փոցինում: Ուզ  
գարնանացաններին հատկացված հողերն անպայման մշակում  
են կուլտիվատորներով և փոցինում են, ըստ վորում հաճախ  
կուլտիվացիան կատարվում ե 2 անգամ:

Յեթե ցանքն արվում և գարնանաներկի վրա, պետք և հողը  
վարել 18 մմ ից վոչ պակաս խորությամբ: Յեթե գարնանահեր-  
կերի վրա ցանվելու յեն վաղ գարնանացան բույսեր, հողն ան-  
միջապես պետք և փոցինել ու ցանել:

Ուշ ցանքող մշակույթների համար գարնանը կատարված  
վարը մինչև ցանքն անպայմանողեն նաև պետք և կուլտիվատո-  
րել և փոցինել:





## ԾԱՆՔԻ ԶԵՎԵՐԸ

Ցանքի ամենավատ ձեւը շաղացանն ե: Նկարներն ուշա-  
դրությամբ նայելով կարելի յե պարզ աեսնել, թե շաղացանն  
ինչու յե վատ (տես նկ. 11):

Շաղացանի ողեպում սերմերը հողի յերեսին ցրվում են  
անհավասար՝ տեղ-տեղ խիտ և տեղ-տեղ դատարկ: Ցանքից հետո  
պահանջվում ե սերմերը թաղել: ինչով ել վոր թաղելու լինեն  
(փոցինով, բազմախոփանիներով, կուլտիվատորով), միենույն ե,  
սերմերը կընկնեն տարբեր խորության մեջ: Այդ պատճառով  
վոչ բոլոր պիտանի հատիկներն են ծառայում նպատակին: Չա-  
փից ավելի խոր թաղված սերմերը կարող են չծլել, կամ՝ ծլել  
մեծ ուշացումով: Միերն ստացվում են անհավասար, դժվարու-  
թյամբ են ճեղքում հողի մեծ ջերտը և բարձրանում վեր: Զծան

սերմերի մի մասը մնում է ընկած հողի յերեսին։ Այդպիսի սերմերը թռչունների կեր են դառնում։ Մենատնտեսություններում, ուր սովորաբար շաղացան եյին կատարում, հավերը գարնանը «կերակրվում եյին» այդ դաշտերում։

Շաղացանի դեպքում սերմերի անոգուտ կորուստն ստիպում



Նկ. 11. Շաղացան. А—անհավասար ցանկած սերմեր, Б—սերմերի անհավասար թաղում, В—անհավասար ծիլեր

Նկ. 12. Շարքացան. А—շարքացանով ցանկած սերմերն ընկած են հավասար, Б—սերմերը հաղում մրկնույն խորության վրա յնն թաղված, В—շարքացանի հավասար ծիլերը

և մեծացնել ցանքի նորման  $10-20^{\circ}/\text{m}^2$ ։ Շաղացանի ծիլերը հաժաշափ չեն լինում։

Նկարից կարելի յե տեսնել, թե ինչպիսի անհամաչափ ծիլեր և տալիս շաղացանը։ Այդպիսի անհամաչափ ծիլեր ունեցող ցանքնարագ կերպով ծածկվում ե մոլախոտերով։ Տարբեր ժամանակ ծլած կատարվում։ Տարբեր ժամանակ ծիլերը տարբեր ժամանակ կատարվում է կատարվում։

այդ նշանակությունը Այդ իսկ պատճենով շաղացանը համարվում ե վոչ կատարյալ ձև։ Շաղացանը կոլտնտեսություններում փոխարինված ե շարքացանով։

Այլ բան ե շարքացանը (տես նկ. 12)։ Սերմերը շարքացանի ժամանակ իսկույն թաղվում են հողի մեջ և ծածկելու առանձին պետք չի լինում։ Նրանք բոլորն ել ընկնում են հավասար խորության վրա։ Թաղման խորությունը կարելի յե փոխել ըստ մեր հայեցողության։

Շարքացանի դեպքում սերմերը տալիս են հավասար ծիլեր։ Այդպիսի ծիլերն ազելի քիչ են ձնշվում մոլախոտերով։ Հավասար ծիլերը միաժամանակ կհասունանան, վորը և բարձրացնում ե բերքը։ Շարքացանը  $20^{\circ}/\text{m}^2$  տնտեսում ե սերմացուն և տալիս ե բերքի աճ  $5^{\circ}/\text{m}^2$ -ից վոչ պակաս։ Պարզ ե, ահա, թե ինչպիսի հըսկացական առավելություն ունի շարքացանը շաղացանի համեմատությամբ։

Շարքացանները տարբեր տեսակի յեն։ Հաշարույսերի սովորական շարքացան մեքենան ցանում ե շարքը շարքից  $14-16$  սանտիմետր հեռավորության վրա։ այդպիսի շարքամիջյան տարածություն ունեցող ցանքը կոչվում ե համատարած շարքացան։ Համատարած շարքացանի միջարքային տարածությունների մշակում չի կատարվում։ Համատարած շարքացանի քաղանը կատարում են ձեռքով։

Յեթե սովորական շարքացան մեքենայի վրայից հանենք խոփիկների մի մասը, կստացվեն լայն շարքամիջեր, այդպիսի շարքամիջով կատարված ցանքը կոչվում ե լայնաշարք ցանք։ Լայնաշարք ցանք կատարելիս հողը կարելի յե և պետք ե քաղանելու ու փլրեցնել տարբեր շարքամիջյան աշխատանք կատարող մեքենաներով։ Լայնաշարք ձևով շատ լավ ե ցանել կորեկը, վորը հեշտությամբ պատվում ե մոլախոտերով։ Վարունքի մարզի Մորշանի շրջանի «Ցուժնի» կոլտնտեսությունը 1933 թ. ստացել ե կորեկի բերք լայն շարքային ցանքից  $16,4$  ցենտներ մեկ հեկտարից, մինչդեռ համատարած շարքացան կատարածից ստացել ե միայն  $12,4$  ցենտներ։ Յեթե կորեկը պետք ե ցանքի վարակված հողում, այդ գեղաքում այդպիսին անպայման պետք ե կատարել լայնաշարք։

Բոլոր այսպիս կոչված շարքամիջերկ բույսերը պիտի անպայմանորեն ցանել կամ տնկել լայնաշարք (արևածաղիկ, յեղիպտացորեն, սոյա, լոբի, կարառֆիլ, բամբակ)։

Ցեղենն լայնաշարք ցանքերը կատարվում են փոքր ինչ այլ կերպ։ Հացաբույսերի սովորական շարքացանի խոփիկները մոտեցնում են իրար 2—3 խոփիկով։ այդպիսի ցանքը կոչվում է ժապավինաձև ցանք։ Յուրաքանչյուր իրար մոտեցրած շարքերի խումբը կոչվում է ժապավին, իսկ ժապավինի յուրաքանչյուրը շարքը կոչվում է շարք կամ գիծ։ Ժապավինաձև ցանքերը կարող են լինել 2—3 շարքանի (գծանի)։

Կորեկն ավելի հաճախ ցանում են ժապավինաձև։ Սաացվում է կրկնակի ոգում ։ դաշտում կամ այնքան բույս, ինչքան համատարած շարքացանի դեպքում և միաժամանակ հնարավոր կլինի շարքամիջյան տարածությունները մշակել կուրտիվատորներով։

### ԻՆՉՊԻՍԻ ՇԱՐՔԱՑԱՆՆԵՐՈՎ ԱՎԵԼԻ ԼԱՎ Ե ՑԱՆԵԼ


Հացաբույսերը ցանում են կամ խոփիկավոր կամ ափսեյավոր շարքացաններով։ Նկար 13-ը ցույց է առաջ խոփիկավոր շարքացանի խոփիկը և ափսեյավոր շարքացանի ափսեն։ Շարքացանն ալխատում է այսպիս։ Խոփիկը կամ ափսեները (ափսեյավոր շարքացանի) գծում են ակոսներ։ Այդ ակոսների մեջ սերմանատար խողովակից ընկնում են սերմերը։ Սերմերը սերմանատար խողովակների մեջ են ընկնում սերմարկղի մեջ յեղած սռնակի (կատուշկայի) ոգնությամբ, զորն իր վրա յեղած առաջներով ըռնում է հատիկը և գցում խողովակների մեջ։ Սռնակը կարելի յետեղից շարժել կարգավորիչի ոգնությամբ և նրանով ել պակասեցնել կամ ավելացնել ցանքի նորման։

Խոփիկավոր շարքացանը մի փոքր ավելի լավ է աշխատում ափսեյավոր շարքացանից։ նա կանոնավոր և հավասարաշափ և թագում սերմ։ Սակայն այդպիսի աշխատանք ստացվում է միայն մաքուր և լավ մշակված հողերում։

Վարակված և մեծ քանակությամբ չփշրված կոշտեր ունեցող հողամասում խոփիկավոր շարքացանի խոփիկները հեշտությամբ պատվում են մոլախոտերով։ Բացի դրանից, խոփիկները հաճախ զուրս են թոշում հողից և հատիկները հավասար կերպով չեն թաղում։ Այսպիսի հողերում ավելի լավ է աշխատում ափսեյավոր շարքացանը։ Յելվատորիթալի շրջանի (Դրիմ) կոլտնտեսականները վատ մշակված և վնասակար չայիր մոլախոտով վարակված հողում փորձելով խոփիկային շարքացանը՝ սկզբում վո-

րոշում կայացըթին, վոր խոփիկավոր շարքացանը միտնգամայն անպետք է և իրը թե լավ և միայն ափսեյավոր շարքացանը, իսկ յերբ հողը մոլախոտերից մաքրեցին և ավելի լավ մշակեցին, սկսեցին գովիլ խոփիկավոր շարքացանը։

Դեռ վերջերս ցանքի համար գործադրվում եր այսպես կոչված բռնկերը։ Բուկկերը բազմախոփիանի յն, գորի վրա ամրացված և սերմարկղը։ Սերմանատար խողովակից թափվող սերմերն



Նկ. 13. Ա—Խոփիկային շարքացանի խոփիկը՝ ցանող ափարատով, ա—սերմարկղ, 6—ցանող կոճ, բ—սերմանատար խողովակ, ը—խոփիկ։ Ե—ափսեյավոր (դիսկային) խոփիկներ, օ—մեկ ափսեյավոր խոփիկ, չ—2 ափսեյավոր խոփիկ։ Վերևում շարքացանից հանած կոճները (ձախ կողմը՝ կոճը հարմարեցրած և ամենափոքր ցանքի համար) քի, աջ կողմը՝ ամենամեծ նորմայով ցանքի համար)։

անմիջապես ծանծաղ կերպով թաղվում են հողում բազմախոփանին թեկրով։ Բուկկերային ցանքը կատարվում էր ուղղակի չհերկած խողանի վրա և դրա համար ել բռնկերային ցանքը կոչվում եր «ծույլացանք»։

Բուկկերային ցանքը կատարվում էր չմշակված հողում, առանց նախացանքային աշխատանք կատարելու։ Այդպիսի ցանքն անխուսափելիորեն տանում եր դեպի բերքի անկում և վարակում

եր դաշտնը Այն կոլտնտեսականները, վորոնք դեռ վերջերս ցանքի համար զործադրում եյին բուկկեր, իրենց սեփական փորձով համոզվեցին նրա ֆլամակարության մեջ և այժմ առում են. «Բուկկերը գողանում եր կոլտնտեսական բարիքը»: Բուկկերային ցանքը լայնորեն հանձնարարվում եր ֆլամարարների կողմէց, վորոնք կամհնում եյին կոլտնտեսական դոչտերում անբերրիություն առաջացնել և մեր ցերկիրը սովի մատնել: Բուկկերային ցանքը հարավային շատ շրջաններում պատճառ դարձավ մոլախոտերի ուժեղ տարածման և իսկապես նշանակալիք չափով իջեցրեց բերքը: Մի քանի կոլտնտեսություններում և խորհութանություններում բուկկերային ցանքի դեպքում մոլախոտերը մարդու բարձրության եյին հասնում:

Վնասարարները մերկացվեցին: Նրանք իրենց արժանի պատիժն ստացան, բայց բուկկերային ցանքի կողմանիցները կեսես տեղ-տեղ մացել են: Այդպիսիների դեմ պետք ե անխնա պայքար մղել, վորովնետերուկկերային ցանքը գործիք ե դասակարգային թշնամու ձեռքում՝ կոլտնտեսությունների տնտեսական հզորությունն ամրացնելու և ունեոր կոլտնտեսական կյանք ստեղծելու դեմ:

Ներկայումս կուսակցության և կառավարության հատուկ վորոշումներով արգելված ե բուկկերային ցանքը: Պետք ե ամենուրեք և ճիշտ իրագործել այդ վորոշումները:

Մեզ կարող են հարցնել. իսկ ինչ անել կոլտնտեսությունները և խորհութանությունները բերված բուկկերները, Հարկավոր և սերմարկղը բուկկերից հանել և նա կլինի հիանալի լուշչիլնիկ (փխրեցնող): Կոլտնտեսականները հավանում են այն. «լավ աշխատանք կստացվի այդպիսի ուղղված, կարգավորված բուկկերից»:

## ՇԱՐՔԱՅԱՆԻ ՍԱՐՔԻ ԳՑԵԼԸ ՑԱՆԵԼՈՒՑ ԱՌԱՋ

Ցանքի համար շարքացանը պետք ե սարքավորվի այնպես, վորպեսզի ցանի ճիշտ այնքան, վորքան վորոշված ե: Աղյուսակում կարգավորիչի կողքին ցույց ե տրվում, թե ինչպես պիտի սարքավորվի այն, վորպեսզի տա ցանքի պահանջվող նորման: Սակայն աղյուսակի ցուցմունքները հաճախ ճիշտ չեն լինում: Դաշտում աշխատելիս շարքացանը միշտ ցանում ե կամ ավելի շատ կամ ավելի քիչ, քան կարգավորիչի աղյուսակում ցույց ե

տրված: Վորպեսզի այդ բանը տեղի չունենա, պետք ե անպայման շարքացանի կարգավորիչը համապատասխան կերպով շարժել և կարգի դցել:

Իսկ մեր շարժել յեթե չգիտես՝ շարքացանը շատ ե ցանում, թե քիչ:

Շարքացանն ստուգելու համար գաջտում ճիշտ կերպով չափում են կես հեկտար տարածություն. նախորոք կշռված հացահատիկը լցնում են սերմարկղը և կատարում ցանքը: Ամբողջ կես հեկտարը ցանելուց հետո շարքացանից գուրս են հանում սերմի մնացորդը, կշռում և հաշվում են ցանած հացահատիկի ճիշտ քաշը: Այդ ժամանակ արդեն հայտնի կլինի, թե վոր կողմ պիտի շարժել կարգավորիչը՝ պակասեցնել սերմացուն: թե շատացնել սերմացուն:

Այսուետե չափում են նորից կես հեկտար: Կրկին կատարում են ցանք, հարկավոր կողմը շարժելով կարգավորիչը: Դարձյալ իմանում են՝ կարգավորիչը նոր զրությամբ լինելու գեպքում շարքացանը ցանմաւմ և արդյոք սերմացվի լրիկ նորման: Յերկրորդ կես հեկտարը ցանելուց հետո հաջողվում է շարքացանը ճիշտ կերպով սարքավորել Գոյությունն ունեն շարքացանի սարքավորման ավելի բարդ հաշիվներ պահանջող ձևեր: Այս մասին պիտի կարգալ Գատովսկու և Խվանովի „Պամյտկա brigadi-րա-պոլեводա“ գիրքը:

## Ի՞՞Չ ԽՈՐՈՒԹՅԱՄԲ ՑԱՆԵԼ ՍԵՐՄԵՐԸ

Յուրաքանչյուր մշակույթի սերմերի համար ագրոկանոնները սահմանում են ցանքի խորության միջին չափ: Գարնանացան ցորենի, վարսակի, գարու սերմերը թաղում են միջին հաշվով 4—5 սմ խորությամբ: Զափից ավելի խոր թաղումը վնասակար ե նրա համար, վոր սերմերը կարող են չաճել և կամ կծլեն անհամաչափ: Զափից ավելի ծանծաղ ցանելու գեղքում սերմերն ընկնում են ավելի չոր հողում և նույնպես կարող են զրի պակասության պատճառով չծլել:

Տարբեր շրջաններում և տարբեր հողերում ցանքի խորությունը զանազան կերպ ե փոփոխվում: Խոնավ, ծանր, արագ պնդացող հողերում սերմերը ցույց տված խորությունից ավելի նույն թաղում (մոտավորապես 2—3 սմ): Ընդհակառակը, թե թե կամ չորային հողերում նրանք թաղվում են ավելի խոր մինչև 6—7 սմ: Յերաշտային շրջաններում սերմերը թաղում են մի քիչ ավելի խոր, քան խօնավ տեղերում:

## ՑԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿԸ

Լավ նախապատրաստած հողում ժամանակին կատարված ցանքը միշտ տալիս ե ամենաբարձր բերքը:

Բոլոր գարնանացան հացարույսերը (գարնանացան ցորեն, վարսակ, գարի) պետք ե ցանքին դաշտ դուրս գալու առաջին որերից, հենց վոր շարքացան մեքենան կարողանա աշխատել: Ամբողջ ցանքը պիտի ավարտվի ամենակարճ ժամանակամիջույնում: Չորային շրջաններում ցանքը պիտի վերջացնել վոչ ավելի քան 7 որում՝ շարքացանների մասսայական աշխատանքի սկզբուց հաջուած: Հյուսիսային շրջաններում ցանքը կարելի յե յերկարացնել 10.-ից մինչև 12 որ, բայց ավելի՝ վոչ մի դեպքում:

Վաղ ցանքը տալիս ե ամենաբարձր բերքը հետեւյալ պատճառներով: Վաղ ցանքի դեպքում հողում ավելի շատ ջուր ե լինում: Վաղ ցանքերն ավելի քիչ են մոլախոտերով ծածկվում և ավելի բարձրորակ բերք են տալիս: Կրուզլիկի (Կրասնոդարի մոտ) փորձակայանի տվյալներով արեածաղկի վաղ ցանքերի սերմերը պարբռնակել են 1,2 տոկոսով ավելի յուղ, քան ուշ ցանքերի սերմերը: Իսկ այդ 1,2 տոկոսն ամենաքիչը յուրաքանչյուր հեկտարից կազմում ե 300 լիտր: Վաղ ցանքերն ավելի քիչ են տուժում վնասատուներից:

Սարատովի հացահատիկային տնտեսության ինստիտուտը տարբեր ժամանակամիջոցներում կատարած ցանքից (աշնանավարից) ստացել ե գարնանացան ցորենի այսպիսի բերք:

Ցանքն ապրիլի 26-ին	12,4	ցենտներ՝	հեկտարից
» մայիսի 4-ին	9,7	»	»
» » 10.-ին	7,0	»	»
» » 18.-ին	6,1	»	»
» » 22.-ին	2,6	»	»

## ԻՆՉՊԵՍ ԴՆԱՀԱՏԵԼ ՑԱՆՔԻ ՎՈՐԱԿԸ

Ցանքն բարձր վորակը բնրքի գրավականն ե: Կառավարության վորոշման համաձայն, աշխորերի հաշվառումը կատարվում է անպայման աշխատանքի վորակը հաշվի առնելով: Իսկ ի՞նչպես ե գնահատվում ցանքի վորակը:

Ամենից առաջ հարկավոր ե ստուգեր թե չկան արդյոք բացատներ, այսինքն՝ արդյոք չցանված տեղեր չեն մնացել:

Եթե ցանքն արդեն կատարված ե և սերմերը թաղված են

հողում, բացատներ վորոշելն անկարելի յե: Ռւսակի հենց շարքացանի աշխատանքի ժամանակ ցանքի վորակին հարկավոր ե հետեւել:

Եթեբեմն շարքացաններն աշխատում են շրջանաձև: Այդ անթույլատրելի յե: Շրջանաձև աշխատանքի ժամանակ պառյատերում միշտ բացատներ են ստացվում: Ռւսակի անհրաժեշտ եր վորակեսղի շարքացանը միշտ աշխատի գործերով, այսինքն՝ դաշտի մի ծայրեց մյուսն անցնի: Արտի ծայրերում պառյատ կատարելիս՝ խոփիկները բարձրացնում են և ցանող ապարատն աշխատանքից հանում: Սակայն այդ ձեր ցանքի դեպքում ես կարող են բացատներ ստացվել հետեւյալ պատճառներով:

1. յերբ ուշացումով ե աշխատանքի դրվում ցանող ապարատը.

2. յերբ սերմարկում քիչ հատիկ ե մնացել, իսկ շարքացանը շարունակում ե աշխատել.

3. յերբ շարքացանի շարքերը լավ չեն մոտենում արդեն անցկացրած շարքերին (նորմալ չափով).

4. յերբ շարքացանին ճիշտ ուղղություն չեն տալիս և նա գնում ե վոչ թե ուղիղ գծով, այլ զիգզագներով.

5. յերբ խոփիկները լցվում են հողով, պատվում են մոլախութերով կամ հողից դուրս են թոշում.

6. յերբ հողամասը մինչեւ ցանքը վատ ե մշակված:

Այդ պատճառներից առաջ յեկած բոլոր բացատները պետք ե կանխել հենց աշխատանքի ընթացքում: Հարկավոր ե հետեւել, վոր շարքացանը գնա ուղիղ: Պետք ե միշտ հետեւել խոփիկների աշխատանքին և անհրաժեշտության դեպքում անմիջապես մաքրել:

Ցանքի բարձր վորակի յերկրորդ պայմանը ցանքն իր ժամանակին կատարելն ե: Ցանքը գետք ե կատարվի փոցխերի աշխատանքից անմիջապես հետո, վորոնցով փոցխում են աշնանավարը կամ գարնանավարը: Ցանքի կատարման ժամանակի մասին արդեն խոսվել ե 40.-րդ եջում:

Այնուհետև հողը փորփելու միջոցով ստուգվում ե ցանքի խորությունը դաշտի տարբեր տեղերում:

Ծիլերի յերեւան գալուց հետո միայն կարելի յե ավելի ճիշտ ստուգել, թե շարքերն ուղիղ են, թե վոչ: Այդ ժամանակ ել կարելի յե ստուգել նաև ցանքի խորությունը: Այդ նպատակի համար վերցնում են մետրանոց շրջանակ (ամեն մի կողմը մեկ

մեարի չափ) և դնում են հողամասի տարբեր տեղերում ու հաշվում են նրա մեջ տեղավորվող ծիլերի քանակը:

Յանքը լավ կարող է համարվել հետեւյալ պայմաններում,  
յերբ՝

1. չկան բացատներ.
2. ցանքի խոռությունը հողամասի տարբեր տեղերում միասնակ է.
3. Յանքի խոռությունն ամենուրեք հավասար և սահմանված չափին.

4. շարքերը միահագասար են և ուղիղ.

5. շարքամիջյան տարածություններն ամենուրեք միատեսակ են:

Յերբ հարկավոր և ձեռքով ցանել պետք ե ամենից առաջ հետեւ ձեռքով շաղ տալու համաշափությանը և սերմերը լավ թղթելուն; Յանք կատարելու համար պետք ե նշանակել ամենից փորձգած սերմացանների:

Անհրաժեշտ և հիշել վոր յերբ յերևան են գալիս ծիլերը, բացատներն արդեն ցանել չի կարելի: Այդ պատճառով ել ցանքի վորակն առաջին հերթին պետք ե ստուգի հենց ցանքի ժամանակ և վոչ թե նրանից հետո:

Բոլոր կոլտնաեսություններում պետք ե կազմակերպվել ցանքի վորակի հասարակական վերահսկողություն: Վորակի տեսչների աշխատանքում պետք ե ներդրավել այն փորձգած ծեր կոլտնաեսականներին, վորոնք նվիրված են կոլտնաեսական գործին, ինչպես և խթճիթ-լարուստորիայի աշխատակիցներին:



## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Եջ

1 Սերմացվի նախապատրասումը ցանիի համար . . . . . 5

Թույլ մի տվեք մոլախոտերը վարակեն կոլտնտեսական գաղտերը . . . . . 5

Ինչպես իմանալ սերմացվի մաքրությունը . . . . . 8

Ժանել լավորակի, ընտիր հացահատիկ . . . . . 10

Հատիկը պետք ե մաքրել և տեսակավորել մի քանի մեքենաների միջոցով . . . . . 10

Ժանքի համար վոչ բոլոր խոշոր և ծանր սերմերն են պիտանի . . . . . 15

Ինչպես ստուգել հատիկի ծլունակությունը . . . . . 15

Սերմացուն փշանում և վատ պահպանելու գնդքում . . . . . 17

Ինչպես պահպանել սերմացուն . . . . . 18

Սերմացվի տնտեսական պիտանիությունը . . . . . 20

Սեր հացարույսերի ամենավատ հիգանդությունը մրիկն ե . . . . . 20

Հատիկի ախտահանումը . . . . . 23

Պահպանիր սորտային հատիկը . . . . . 25

Սերմացուների յարովի լացիքիա . . . . . 27

11 Յ ա 6 ի . . . . . 29

Մինչև ցանքի սկիզբը պետք ե ճշտորեն հաշվել ցանքի նոր մաները տարբեր հօղամասերի համար . . . . . 29

Հողի նախացանքային մշակումը . . . . . 32

Ժանքի ձեռքը . . . . . 33

Ինչպիսի շարքացաններով ավելի լավ ե ցանել . . . . . 36

Շարքացանի սարքի գցելը ցանելուց առաջ . . . . . 38

Ինչ խոռությամբ ցանել սերմերը . . . . . 39

Ժանքի ժամանակը . . . . . 40

Ինչպես դնահատել ցանքի վարակը . . . . . 40

Պատ. Խմբ.՝ Գ. Աղաջանյան  
Տեխ. Խմբ.՝ Հ. Մուրադյան

Լեզվ. Խմբ.՝ Աբբ. Գրիգորյան  
Սբությունների Խ. Այվազյան

Գլավկոսի լիազոր Ս-475, հրատ. № 311, պատվ. № 164, տիբուժ 2000

Հանձնված և որագրության 1936 թվի մարտի 10-ին

Սառըագրված և ոպագրելու 1936 թվի մարտի 31-ին

Տ, 3/4 պատրական թերթ. 1 ուղ. թերթում 38400 ուղ. նշ.

Գյուղերական ուղարքներ, Յերևան, Նովոնյոյան № 11

«Ազգային գրադարան



NL0293026

266

15338

ЧИСЛ 60 ЧПЧ.



БИБЛИОТЕКА КОМСОМОЛСКОГО РАБОЧЕГО СОВХОЗА

З. С. ЧЕГОДАЕВА

СЕМЕНА И ПОСЕВ

СЕЛЬХОЗГИЗ ЗРИВАНЬ 1936